

2017

ՀՀ համայնքների աղբահանության ծախսերի վերլուծություն



Փորձագիտական խումբ

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման
նախարարություն

4/25/2017

Կառավարությունը սկսել է «Մաքուր Հայաստան» ծրագիրը, որի նպատակը քաղաքների, գյուղերի և ճանապարհների մաքրության ապահովումն է: Դա քաղաքացիների, զբոսաշրջիկների և ներդրողների համար մեր երկիրը ավելի գրավիչ և հարմարավետ դարձնելու գլխավոր նախապայմաններից է:

Մաքրությունը ապահովելու նպատակով ՀՀ համայնքները իրականացնում են աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ: Աղբահանության դիմաց ֆիզիկական և իրավաբանական անձինք վճարում են օրենքով սահմանված գումար, իսկ սանիտարական մաքրման աշխատանքները իրականացվում են բյուջեի միջոցներից:

Այս աշխատանքի նպատակն է՝ պարզել 1 շնչին բաժին ընկնող աղբահանության միջին ծախսը, գնահատել աղբահանության դիմաց գանձվող վճարների հավաքագրման մակարդակը և հասկանալ, որ դեպքում է աղբահանության գործընթացը դառնում ինքնաձախսաձածկվող:

Այդ նպատակին հասնելու համար դիտարկվել են 43 համայնքների 2016թ. վիճակագրական տվյալները, որոնք վերցվել են համայնքների բյուջեների և ծախսերի հաշվետվություններից, համայնքների ներկայացված տեղեկատվությունից: Օգտագործվել են բնակչության թիվ ըստ ռեգիստրի (ընդհանուր թիվը՝ 1035582), դրույքաչափ, աղբահանության, աղբավայրի շահագործման և սանիտարական մաքրման ծախսեր, հավաքագրումներ ֆիզիկական և իրավաբանական անձանցից ցուցանիշները:

Համայնքները բաժանվել են 4 խմբի՝ կախված բնակչության թվից: Առաջին խմբում ընդգրկվել են այն համայնքները, որոնց բնակչության թիվը գտնվում է [5000, 10000) միջակայքում, երկրորդ խմբում՝ [10000, 20000) միջակայքում, երրորդ խմբում՝ [20000-40000) միջակայքում, չորրորդ խմբում՝ որոնք բնակչության թիվը մեծ է 40000-ից:

Առաջին խմբում ընդգրկված են 14 համայնքներ՝ Ոսկետափ, Ագատան, Ամասիա, Պռոշյան, Առինջ, Նոր Գեղի, Ջրվեժ, Մարալիկ, Եղեգնաձոր, Վայք, Փարաքար, Ախուրյան, Ջերմուկ, Բերդ, երկրորդ խմբում ընդգրկված են 13

համայնքներ՝ Բյուրեղավան, Տաշիր, Մեղրի, Մեծամոր, Մարտունի, Եղվարդ, Վեդի, Սիսիան, Սպիտակ, Նոյեմբերյան, Իջևան, Ստեփանավան, Արարատ, երրորդ խմբում ընդգրկված են 10 համայնքներ՝ Արտաշատ, Մասիս, Արմավիր, Չարենցավան, Դիլիջան, Արթիկ, Ալավերդի, Գորիս, Գավառ, Սևան, չորրորդ խմբում ընդգրկված են 6 համայնքներ՝ Գյումրի, Վանաձոր, Աբովյան, Հրազդան, Էջմիածին և Կապան:

Ամեն խմբի համար հաշվարկվել է աղբահանության փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով: Արդյունքները ներկայացված են ստորև բերված աղյուսակներում՝

Աղյուսակ 1. Առաջին խմբի 1 շնչին ընկնող աղբահանության փաստացի ծախսեր

Համայնք	Աղբահանության ծախսեր ¹	1 շնչին ընկնող աղբահանության փաստացի ծախս
Ոսկետափ	7,392,000	1425
Ազատան	1,836,000	347
Ամասիա	974,000	176
Պռոշյան	4,320,000	765
Առինջ	21,515,000	3764
Նոր Գեղի	2,640,000	405
Ջրվեժ	25,788,500	3713
Մարալիկ	23,173,000	3174
Եղեգնաձոր	13,153,000	1592
Վայք	6,900,000	811
Փարաքար	34,740,000	3875
Ախուրյան	7,193,000	770
Ջերմուկ	19,640,500	2095
Բերդ	22,300,000	2260

¹ Աղբահանության ծախսեր սյունակի մեջ ներառված են բուն աղբահանության ծախսերը և աղբավայրի շահագործման ծախսերը:

Աղյուսակ 2. Երկրորդ խմբի 1 շնչին ընկնող աղբահանության փաստացի ծախսեր

Համայնք	Աղբահանության ծախսեր	1 շնչին ընկնող աղբահանության փաստացի ծախս
Բյուրեղավան	40,745,100	3810
Տաշիր	25,070,000	2177
Մեղրի	19,000,000	1629
Մեծամոր	26,040,000	2120
Մարտունի	42,140,000	3010
Եղվարդ	4,890,000	337
Վեդի	19,392,000	1310
Մխիթան	27,625,000	1640
Սպիտակ	28,605,900	1676
Նոյեմբերյան	30,509,000	1737
Իջևան	52,205,600	2757
Ստեփանավան	13,994,750	728
Արարատ	23,605,000	1205

Աղյուսակ 3.

Երկրորդ խմբի 1 շնչին ընկնող աղբահանության փաստացի ծախսեր

Համայնք	Աղբահանության ծախսեր	1 շնչին ընկնող աղբահանության փաստացի ծախս
Արտաշատ	38,634,400	1541
Մասիս	34,685,000	1465
Արմավիր	59,726,000	1611
Չարենցավան	49,282,600	1662
Դիլիջան	30,624,900	1147
Արթիկ	18,310,000	903
Ալավերդի	40,050,000	1950
Գորիս	41,277,000	1407
Գավառ	34,377,000	1291
Սևան	37,893,000	1574

Աղյուսակ 4. Չորրորդ խմբի 1 շնչին ընկնող աղբահանության փաստացի ծախսեր

Համայնք	Աղբահանության ծախսեր	1 շնչին ընկնող աղբահանության փաստացի ծախս
Գյումրի	200,000,000	1271
Վանաձոր	184,065,000	1502
Աբովյան	151,820,000	3237
Հրազդան	73,560,000	1502
Էջմիածին	136,000,000	2387
Կապան	55,490,000	1502


Աղյուսակ 1-4 տվյալների հիման վրա հաշվարկվել է ամեն խմբի 1 շնչին ընկնող աղբահանության փաստացի ծախսի միջինը և ստանդարտ շեղումը, որը ներկայացված է ստորև՝


Աղյուսակ 5. 1 շնչին ընկնող աղբահանության փաստացի ծախսերի միջինները և ստանդարտ շեղումները բոլոր խմբերի համար


Խումբ	Միջին	Ստանդարտ շեղում
1	1798	1359
2	1857	939
3	1455	291
4	1770	937


Ամեն խմբի մեջ համայնքների փաստացի և միջին ծախսերի հարաբերակցությունը տեսնելու համար կառուցվել են գրաֆիկներ, որտեղ ներկայացված են ամեն համայնքի փաստացի ծախսը, միջինը և շեղումները ± 1 ստանդարտ շեղման չափով՝

Գծապատկեր 1









Ինչպես տեսնում ենք գրաֆիկներից, բացի երրորդ խմբից, մնացած խմբերում ցրվածքը մեծ է, և որպեսզի ստանանք ներկայացուցչական միջին ցուցանիշ, պետք է շեղման միջակայքից դուրս մնացած համայքները հանել միջինի հաշվարկումից: Այդ եղանակով գնահատման դեպքում կունենանք հետևյալ պատկերը՝

Աղյուսակ 5. 1 շնչին ընկնող աղբահանության փաստացի ծախսերի ներկայացուցչական միջինները և ստանդարտ շեղումները բոլոր խմբերի համար

Խումբ	Միջին	Ստանդարտ շեղում
1	1265	681
2	1686	340
3	1455	291
4	1633	433
Ներկայացուցչական միջին	1510	191

Չորս խմբերի համար գնահատված միջինների միջինացման արդյունքում ստացվում է մի ցուցանիշ, որը կարող է դառնալ 1 շնչի հաշվով աղբահանության ծախսի ուղենշային մակարդակ. այն կազմում է 1500 դրամ տարեկան:

Նույն տրամաբանությամբ կատարվել է 1 շնչին ընկնող սանիտարական մաքրման ծախսերի հաշվարկը: Ներկայացուցչական միջինը կազմել է 1000 դրամ 660 ստանդարտ շեղման պարագայում:

Օգտագործելով 1500 դրամը որպես աղբահանության օպտիմալ ծախս, իսկ 1000 դրամը՝ որպես սանիտամաքրման, հաշվարկվել են աղբահանության և սանիտամաքրման ընդհանուր ծախսերը օպտիմալ ծախսի

պարագայում: Աղյուսակ 6-ից երևում է, որ աղբահանության փաստացի ծախսը գերազանցում է օպտիմալին 177,809,250 դրամով, իսկ սանիտամաքրման դեպքում այդ տարբերությունը կազմում է 78,338,300 ՀՀ դրամ:

Աղյուսակ 6. Փաստացի և օպտիմալ ծախսերի համեմատությունը

	Փաստացի ծախս	Օպտիմալ ծախս	Փաստացի և օպտիմալ ծախսերի տարբերություն
Աղբահանություն	1,731,182,250	1,553,373,000	177,809,250
Սանիտարական մաքրում	1,113,920,300	1,035,582,000	78,338,300
Ընդամենը	2,845,102,550	2,588,955,000	256,147,550

Աղյուսակ 7-ում ներկայացված են ընդհանուր հավաքագրումները ֆիզիկական և իրավաբանական անձանցից, հավաքագրման միջին տոկոսը 43 համայնքների համար, որը կազմում է 40%: Ամեն մի համայնքի համար հաշվարկվել է անհատական հավաքագրման տոկոսը հետևյալ եղանակով՝ ֆիզիկական անձանցից փաստացի հավաքագրումները հարաբերվել են այն եկամտի վրա, որը համայնքը կստանար, եթե բնակչության 100%-ը վճարեին աղբահանության վարձը:

Աղյուսակ 7. Հավաքագրումներ ֆիզիկական և իրավաբանական անձանցից

Հավաքագրումներ ֆիզիկական անձանցից	884,558,274
Հավաքագրումներ իրավաբանական անձանցից	391,532,879
Հավաքագրման միջին տոկոս	40%

Աղյուսակ 7-ի հիման վրա ենթադրենք, որ իրավաբանական անձանցից հավաքագրումները ևս կազմում են 40%:

Այսպիսով՝ եթե միավորենք մեր հաշվարկները մեկ աղյուսակում, կտեսնենք, որ եթե հավաքագրումները կատարվեն 80%-ով, ապա ֆիզիկական անձանցից ստացված գումարը կկազմի 1,460,089,056 ՀՀ դրամ, որը 575,530,782 ՀՀ դրամով գերազանցում է փաստացի թվին, իսկ իրավաբանական անձանցից ստացված գումարը կկազմի 783,065,758 ՀՀ դրամ, որը 391,532,879 ՀՀ դրամով գերազանցում է փաստացի թվին:

Աղյուսակ 8. Ընդհանուր ծախսերի և ընդհանուր եկամուտների համեմատություն

	Փաստացի	Օպտիմալ		Փաստացի	Եթե վճարի 80%-ը
Աղբահանություն	1,731,182,250	1,553,373,000	Հավաքագրումներ ֆիզիկական անձանցից	884,558,274	1,460,089,056
Սանիտմաքրում	1,113,920,300	1,035,582,000	Հավաքագրումներ իրավաբանական անձանցից	391,532,879	783,065,758
Ընդամենը	2,845,102,550	2,588,955,000	Ընդամենը	1,276,091,153	2,243,154,814

Ընդհանուր փաստացի հավաքագրումները կազմում են 1,276,091,153 ՀՀ դրամ, իսկ աղբահանության ծախսերը՝ 1,731,182,250 ՀՀ դրամ, այսինքն աղբահանության նպատակով ծախսվող 455,091,097 ՀՀ դրամը ֆինանսավորվում է բյուջեի միջոցների հաշվին: Եթե հավաքագրումները իրականացվեն 80%-ով, ապա ընդհանուր եկամուտները կկազմեն 2,243,154,814 ՀՀ դրամ, և որպեսզի փոխհատուցվի աղբահանության և սանիտարաքրման օպտիմալ ծախսերը 2,588,955,000 ՀՀ դրամ, անհրաժեշտ է լրացուցիչ 345,800,186 ՀՀ դրամ, այսինքն կինայվի 1,223,211,211 ՀՀ դրամ (բյուջեից սանիտարաքրման վրա ծախսվող 1,113,920,300 ՀՀ դրամը և աղբահանության վրա ծախսվող գումարից առաջացած խնայողությունը՝ 109,290,911² ՀՀ դրամ), որը կարող է օգտագործվել այլ ուղղություններով:

Եթե այս վերլուծությունը կատարվի բոլոր 793 համայնքների համար, օպտիմիզացիայի արդյունավետությունը զգալիորեն կմեծանա, քանի որ որոշ համայնքներում աղբահանության ծախսեր իրականացվում են, իսկ հավաքագրումներ չեն կատարվում:

² 109290911=455091097-345800186